

Վարդան Զ. Պետրոսյան

Բանաս. գիյր. թեկնածու

**ԵՐԿԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ***

Բանալի բառեր – իսկական երկբարբառ, կեղծ երկբարբառ, հավասարաթեք երկբարբառ, կայուն և ոչ կայուն երկբարբառներ, երկբարբառի միջուկ, գլայդ հնչյուն, երկբարբառակերպ, Է. Աղայան, Հ. Գլխոն, Լ. Զինդեր:

Մուտք

Լեզվաբանական գրականության մեջ երկբարբառի միասնական ըմբռնում չկա: Առաջադրված բնորոշումների մեծ մասի համար կարող է ընդհանուր համարվել, թերևս, **երկբարբառը (մեկ վանկում արտաբերվող) երկու ձայնավորի կամ ձայնավորի և ձայնորդի հնչարտաբերական բարդ միասնություն է, որի բաղադրիչներից միայն մեկն ունի վանկարար գործառույթ** տիպի ձևակերպումը: Իրականում երկբարբառին տրված բնորոշումները, մի կողմ թողնելով նրանցում առկա ոչ էական տարբերությունները, միմյանցից տարբերվում են մի շարք էական կողմերով:

1. Երկբարբառի ըմբռնումը լեզվաբանության մեջ

Լեզվաբանական գրականության մեջ երկբարբառի վերաբերյալ արտահայտված տեսակետները կարելի է խմբավորել ըստ հետևյալ հիմնական տեսակների.

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.12.2024:

Ա) Լեզվաբաններից շատերի կարծիքով՝ **երկբարբառ է երկու ձայնավորի («V₁ + V₂»)** միասնական արտաբերությունը մեկ վանկում, որի բաղադրիչներից միայն մեկն ունի վանկարար գործառույթ (Ն. Տրուբեցկոյ, Բ. Բլոխ, Զ. Թրեյշեր, Կ. Փայկ, Գ. Ցիպֆ, Ը. Գլիսոն, Ռ. Բուդաղով, Ա. Ռեֆորմատսկի, Վ. Կոդուխով, Յու. Մապով, Լ. Բոնդարկո, Օ. Ախմանովա)¹: Ըստ էության, այդպիսի ըմբռնման մի տարբերակն է նաև երկբարբառի բնորոշումը որպես **երկու**

վանկարար հնչյունների միասնական արտաբերությունը մեկ վանկում, որոնցից մեկն է վանկարար (Է. Աղայան)²: Այս դեպքում **վանկարար** (*syllabic / слогаобразующий*) տերմինով նկատի են առնվում ոչ միայն ձայնավորները, այլև տվյալ լեզվում վանկարարության գործառույթով օժտված ձայնորդները, որպես կանոն՝ կիսաձայն-ձայնորդները³: Այսինքն՝ նաև «V + S»և«S + V» տիպի կաղապարներով կազմությունները:

Բ) Ուրիշները երկբարբառ են համարում երկու ձայնավորի («V₁ + V₂»), ձայնավորի և կիսաձայն-ձայնորդի («V + S» / «S + V») հնչարտաբերական միասնությունը մեկ վանկում, որի բաղադրիչներից միայն մեկն է վանկարար (Զ. Զիվերս, Դ. Զոունգ, Ը. Աճառյան, Գ. Ղափանց-

¹ Տե՛ս **Трубецкой Н.**, Основы фонологии, М., 2000, էջ 62,- **Хэмп Э.**, Словарь американской лингвистической терминологии, М., 1964, էջ 66,-**Будагов Р.**, Введение в науку о языке, М., 1958, էջ 149-150,- **Реформатский А.**, Введение в языковедение, М., 1967, էջ 191,- **Кодухов В.**, Введение в языковедение, М., 1979, էջ 124,- **Маслов Ю.**, Введение в языковедение, М., էջ 82,- **Ахманова О.**, Словарь лингвистических терминов, М., 1966, էջ 138,- **Бондарко Л.**, Дифтонг // Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 138:- Կ. Փայկը երկբարբառը բնորոշում է որպես «երկու ձայնավորակերպի (вокоидов) հաջորդակախություն» (տե՛ս **Хэмп Э.**, նույն տեղում):

² Տե՛ս **Աղայան Է.**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 226:

³ Վեդայական հնդկերենում և սանսկրիտում՝ երկու բաղաձայնի միջև դիրքում, վանկարար գործառույթ են ունեցել նաև նայական ձայնորդները՝ ɾ, ɽ, ɳ, սակայն ձայնավորի և նայականի միասնությամբ երկբարբառներ չեն տարբերակվում (տե՛ս **Елизаренкова Т.**, Грамматика ведийского языка, М., 1982, էջ 65-67,- **Նույնի՝** Древнеиндийские языки // Языки мира, М., 2004, էջ 14-32,- **Зализняк А.**, Грамматический очерк санскрита // **Кочергина В.**, Санскритско-русский словарь, М., 1978, էջ 788): Ըստ Թ. Բարոուի՝ սանսկրիտում վանկարար գործառույթով հանդիպում են նաև ռնգային ձայնորդները՝ ᳵ-ն և ᳶ-ն (տե՛ս **Барроу Т.**, Санскрит, М., 1976, էջ 103): Նայականները վանկարար գործառույթ են ունեցել նաև հին սլավոներենում, մի լեզու, որում հ.-ե. երկբարբառները ենթարկվել էին մենաբարբառացման՝ վերածվել պարզ ձայնավորների կամ սղվել էին (հմմտ. връхъ [vr̥xə] «վերևը», грѣдь [gr̥ɛd̥ɔ] «հպարտ», влькъ [vl̥kə] «գայլ», длѣгъ [dl̥gə] «երկար», кръвь [kr̥v̥] «արյուն» և այլն) (տե՛ս **Хабургаев Г.**, Старославянский язык, М., 1974, էջ 105-108, 121-125,- **Горшков А.**, Старославянский язык, М., 1974, էջ 107,- **Бернштейн С.**, Очерк сравнительной грамматики славянских языков, М., 1961, էջ 192-198, 207,- **Мейе А.**, Общеславянский язык, М., 1951, էջ 46-65): Ի տարբերություն մյուս հեղինակների, ֆրանսիացի սլավոնաբան Ա. Վայանը հին սլավոներենում տարբերակել է նաև երկբարբառներ՝ ю, ѥ, а, ѥ, ѧ, այդպիսին համարելով հատկապես առաջին երկուսը (տե՛ս **Вайан А.**, Руководство по старославянскому языку, М., 1952, էջ 40):

յան, Հ. Պետրոսյան, Վ. Համբարձումյան)⁴: Քանի որ նշված հեղինակները, բացառությամբ Գ. Ղափանցյանի, չեն անդրադառնում տվյալ լեզվում ձայնորդի (/կիսաձայնի)՝ վանկարար հատկանիշով օժտված լինելու (/ չլինելու) խնդրին, պիտի կարծել, որ երկբարբառի տարբերակման համար այդ հանգամանքը պարտադիր չեն համարում:

Գ) Մեկ այլ տեսակետի համաձայն երկբարբառը «ձայնավորի և ձայնորդի համակցություն է, որոնք կազմավորում են բարդ հնչույթ» (Լ. Բլումֆիլդ)⁵, այսինքն՝ երկբարբառ են միայն «V + S» տիպի, ընդ որում՝ միայն այդ տիպի, այսինքն՝ իջնող հնչերանգով կազմությունները, այլ ոչ թե՛ նաև «S + V» տիպի, այն է՝ բարձրացող հնչերանգով կազմությունները: Ձայնորդ ասելով՝ Բլումֆիլդը ևս նկատի ունի միայն *y* [j] և *w* [w] կիսաձայնները (հմմտ. [ij]-ը *see* [si:] «տեսնել», [aj]-ը՝ *buy* [baɪ] «գնել», [ow]-ը՝ *go* [ɡoʊ] «գնալ» անգլերեն, [aj]-ը՝ *Eis* [aɪs] «սառույց», [oj]-ը՝ *neu* [noɪ] «նոր» գերմաներեն բառերի կազմում և այլն)⁶: Հաջորդող շարադրանքից պարզ է դառնում, որ երկբարբառի այսպիսի բնորոշման հիմքում առավելապես անգլերենի ու գերմաներենի տվյալներն են, բայց հեղինակը հավելում է, որ «հնչույթների այս կամ այն համակցությունը բարդ հնչույթ (իմա՝ երկբարբառ, եռաբարբառ՝ Վ.Պ.) պիտի համարել, թե ոչ, կախված է տվյալ լեզվի հնչյունաբանական կառուցվածքից»⁷: Մասնավորապես, ըստ Լ. Բլումֆիլդի, լիտվերենում «[r, l, m, n] ձայնորդները երբեք վանկակազմիչ չեն լինում, բայց [ar, al, am, an] խմբերը լեզվի կառուցվածքի և նրա շեշտադրության տեսանկյունից դիտարկվում են որպես երկբարբառներ»⁸:

Դ) Ոմանք տարբերակում են *իսկական* (= կայուն, բուն / *истинный* (= *устойчивый, собственный*)) և ոչ *իսկական* (= ոչ կայուն, կեղծ / *скользящий* (= *неустойчивый, ложный*)) երկբարբառներ՝ առաջին տեսակի համարելով մեկ վանկում արտաբերվող երկու ձայնավորի («V₁ + V₂») այնպիսի միասնությունը, որի բաղադրիչները համասեռ (= հավասարա-

⁴ Տե՛ս Зиндер Л., Общая фонетика, М., 1979, էջ 210,- Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն, Եր., 1939, էջ 76-78,- Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 202-203,- Համբարձումյան Վ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2018, էջ 24:

⁵ Տե՛ս Блумфилд Л., Язык, М., 1968, էջ 125:

⁶ Օրինակները, այդ թվում՝ տառադարձումը, ըստ Блумфилд Л., նշվ. աշխ., էջ 126-127:

⁷ Блумфилд Л., նշվ. աշխ., էջ 126: Ուրիշները Լ. Բլումֆիլդի կողմից կիսաձայնական բաղադրիչներով տառադարձումները նշանակում են դրանց համապատասխան ձայնավորներով: Դա նշանակում է, որ այդ երկբարբառների կազմում տարբերակում են միայն ձայնավորական բաղադրիչներ, ինչպես՝ [ai], [ei], [ou], [au] և այլն, իսկ, օրինակ, *see* «տեսնել» բառում տարբերակվում է ոչ թե [ij] երկբարբառ, այլ երկար ձայնավոր՝ *i* [i:] (տե՛ս Матюшкина-Герке Т., Балашова С., Броссе Н., Иванова Л., Кузьмичева Т., Чахоян Л., Учебник английского языка, М., 1968, էջ 11, 22-23, 31-32 և այլն,-Вилюман В., Корнеева Е., Сорокина И., Английский язык, М., 1980, էջ 9, 20, 27 և այլն):

⁸ Блумфилд Л., նշվ. աշխ., էջ 127:

ծեք) են: Այլ կերպ՝ երկբարբառը մեկ հնչույթի համարժեք, միաձույլ բարդ համակցություն է, որի կազմում չեն կարող առանձնացվել **վանկարար** և **ոչ վանկարար** բաղադրիչներ (Օ. Եսպերսեն, Լ. Շչերբա, Մ. Մատուսևիչ, Յ. Վահեկ, Ռ. Բուդաղով): Երկբարբառի այս տեսակը հազվադեպ է հանդիպում: Հնդեվրոպական լեզուներից այդպիսիք տարբերակվում են, օրինակ, լատիշերենում (հմմտ. [eːi]. *meita* [meːita] «աղջիկ», [aːu]. *tauta* [taːuta] «ժողովուրդ» և այլն)⁹ և լիտվերենում (հմմտ. *dienā* [diːena] «օր», *žiemā* [žiːema] «ձմեռ», *tie* [tiːe] «այդ» և այլն)¹⁰: Այդպիսի երկբարբառներ ունի նաև տունգուս-մանջուրական լեզվաընտանիքին պատկանող ուղեյերեն (/ուղեգեյերեն) լեզուն¹¹: «V₁ + V₂» կադապարով այն երկբարբառները, որոնց բաղադրիչներից միայն մեկն է վանկարար, երկբարբառի այս ըմբռնման որոշ ներկայացուցիչների կարծիքով միահնչույթ են, բայց՝ ոչ կայուն, հետևաբար՝ *ոչ իսկական*: Վերջին միտքը պնդել է, մասնավորապես, Յ. Վահեկը¹²: Այս առնչությամբ, սակայն, Ն. Տրուբեցկոյն անում է վերապահում այն իմաստով, որ միահնչույթ երկբարբառը պիտի լինի *ոչ կայուն* տեսակի, բայց ամեն մի «ոչ կայուն» երկբարբառ դեռևս միահնչույթ չէ. որպեսզի երկբարբառը (առիասարակ երկու հնչունի համակցությունը) համարժեք լինի մեկ հնչույթի, այն պիտի արտասանվի «միասնական արտաբերական շարժումով» (տե՛ս *միահնչույթայնության երկրորդ կանոնը*): Ընդհակառակն, եթե երկբարբառի արտաբերության ժամանակ խոսքային օրգանները կատարում են «տարբեր ուղղվածության շարժումներ», ապա այն չի կարող միահնչույթ լինել¹³: Այս առումով պիտի նկատել, որ երկբարբառի՝ ինչպես Վահեկի, այնպես էլ Տրուբեցկոյի առաջարկած՝ միահնչույթ կամ երկհնչույթ լինելու չափանիշը, ըստ Լ. Զինդերի, հնչունաբանական է, այլ ոչ թե հնչույթաբանական¹⁴:

Ե) Եթե մինչև այժմ դիտարկված տարբերակներում երկբարբառը՝ որպես երկու ձայնավորի կամ ձայնավորի և ձայնորդի համակցություն, ընդհանուր առմամբ համարժեք էր համարվում մեկ բարդ հնչույթի, ապա հնարավոր է համարվել նաև երկհնչույթ (= երկձայնավոր) երկ-

⁹ Նշվածներից բացի, լատիշերենում տարբերակվում են նաև ai, eu, oi, ou, iu, ui, ie և uo (վերջինը գրության մեջ նշանակվում է o տառով) երկբարբառները՝ թվով տասը (տե՛ս **Грабис Р.**, Латышский язык // ЯН СССР, т. I, Индоевропейские языки, М., 1966, էջ 470):

¹⁰ Տե՛ս **Матусевич М.**, Введение в общую фонетику, Л., 1948, էջ 80:

¹¹ Տե՛ս **Зиндер Л.**, Նշվ. աշխ., էջ 210, - **Будагов Р.**, Введение в науку о языке, М., էջ 1958, 149-150, - **Сунник О.**, Удгейский язык // ЯН СССР, т. V, Л., 1968, էջ 212:

¹² Տե՛ս **Зиндер Л.**, Նշվ. աշխ., էջ 212, - **Трубецкой Н.**, Основы фонологии, М., 2000, էջ 62:

¹³ Տե՛ս **Трубецкой Н.**, Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս **Зиндер Л.**, Նշվ. աշխ., էջ 211-216:

բարբառների տարբերակումը: Օրինակ, ըստ Յ. Վահեկի՝ «կայուն երկ-բարբառները» («устойчивые дифтонги») երկինչույթ են, ի տարբերություն *ոչ կայունների* (*скользящие*), որոնք միահինչույթ են: Նրա կարծիքով, «կայունների» բաղադրիչները պահպանում են իրենց հնչյունաբանական ինքնությունությունը, ուստի հոգեբանորեն հնարավոր չէ, որ «նրանք միասին կազմեն մեկ ամբողջ»¹⁵: Լ. Զինդերը, երկբարբառի՝ միահինչույթ կամ երկինչույթ լինելը որոշելու Յ. Վահեկի չափորոշիչը համարելով հնչյունաբանական, այդ հարցում «վճռորոշ նշանակություն» է տալիս երկբարբառի բաղադրիչների՝ միևնույն վանկում արտաբերվելու, թե կից վանկերի միջև բաշխվելու հանգամանքին (հմմտ. «.... խոսքն այն մասին է՝ երկբարբառի երկու բաղադրիչները կմնան մեկ վանկում, թե նրանց միջև կանցնի վանկաբաժանը»¹⁶: Ըստ Լ. Զինդերի՝ երկբարբառի (*իսկական*՝ - Վ.Պ.) տարբերակման հիմնական լեզվաբանական չափորոշիչ կարող է լինել նրա բաղադրիչների ձևաբանական տրոհելիությունը կամ անտրոհելիությունը. եթե երկբարբառային կապակցության բաղադրիչները տրոհվում են *ձևայթային կարով* (*morphemic joint / морфемный шов*), այն երկինչույթ է, իսկ եթե չեն տրոհվում ձևայթային կարով, միահինչույթ է: Հնչյութաբանական տեսանկյունից երկբարբառ համարելով միայն միահինչույթ համակցությունները, այնուամենայնիվ, նա չի մերժում նաև երկինչույթ երկբարբառներ տարբերակելու հնարավորությունը (հմմտ. «Իսկական երկբարբառների երկինչույթ բնույթի դեպքում նրա բաղադրիչները պիտի դիտարկվեն որպես ինքնություն ձայնավորներ, իսկ ամբողջ երկբարբառը՝ իբրև ձայնավորների համակցություն»)¹⁷:

Բացառությամբ երկբարբառի (Դ) կետով ներկայացված ըմբռնման, մյուսների համար ընդհանուր է երկու բան. 1) վանկարարության հատկանիշ վերագրվում է երկբարբառի բաղադրիչներից միայն մեկին. ըստ այդմ՝ երկբարբառի վանկարար բաղադրիչը համարվում է նրա *միջուկը* (*diphthong nucleus / ядро дифтонга*). 2) վանկարար (= առավել լիահունչ) հնչյունի դիրքով պայմանավորված՝ երկբարբառները, ըստ հնչերանգի, լինում են *բարձրացող* (*rising / восходящий*) կամ *իջնող* (*falling / нисходящий*). Բարձրացող են նրանք, որոնց առավել լիահունչ բաղադրիչը՝ վանկարարը, գտնվում է երկրորդ դիրքում, ընդհակառակն, իջնող են նրանք, որոնց վանկարարը առաջին բաղադրիչն է: Հնչյունաբանների շրջանում առկա պատկերացումների համաձայն աշխարհի լեզուներում էականորեն

¹⁵ Տե՛ս 3индер Л., նշվ. աշխ., էջ 212:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս 3индер Л., նշվ. աշխ., էջ 216:

գերակշռում է իջնող տեսակը, հատկապես երբ դրանց շարքին դասվում են նաև «V + S» կաղապարն ունեցողները¹⁸:

Համաձայն (Դ) կետում ներկայացված ըմբռնման՝ երկբարբառը չի կարող լինել *բարձրացող* կամ *իջնող*, որովհետև նրա կազմում չեն կարող տարբերակվել *վանկարար* և *ոչ վանկարար* բաղադրիչներ:

2. Երկբարբառի՝ վերոհիշյալ բնութագրերի ընդհանուր և տարբերակիչ գծերը

Հասկանալի է, որ երկբարբառի՝ վերը ներկայացված ոչ բոլոր բնութագրերն են համատեղելի, ուստիս դժվար է առաջարկել այնպիսի սահմանում, որը կներառի գոնե հիմնական հատկանիշները: Այսպես. երկբարբառի բնորոշումը որպես՝ 1) **երկու ձայնավորից կազմված, մեկ վանկում արտաբերվող և գործառական մեկ նվազագույն միավորի (= հնչույթի) համարժեք հնչյունական բարդ համալիր («V₁ + V₂»)**, որի բաղադրիչներից մեկն է **վանկարար**, դուրս է թողնում երկբարբառի այնպիսի պատկերացումները, ինչպիսիք են՝ ա) միևնույն հնչաբառի՝ կից վանկերում արտաբերվող երկհնչյուն (երկհնչույթ – ?) կապակցությունը, որի բաղադրիչները տրոհելի են ձևույթային կարով, այլ կերպ՝ վերաբերում են տարբեր ձևույթների (հմմտ. գրբ. հյ. *ունէաք* «ունենում էինք» (անց. անկ. Ժ., հգն. թ., 1-ին դ.)՝ *ունէ-աք*, *միակ' մի-ակ*, *միեղէն* «միակ, եղակի»՝ *մի-եղէն*, *Իգնատիէ* (*Իգնատիոսի* կոչականը)՝ *Իգնատի-է*՝ և այլն). բ) հնչաշղթայում անմիջական հաջորդականություն կազմող երկու ձայնավոր հնչյունների միասնական արտաբերությունը, որոնք կարող են նաև տրոհվել կից վանկերի միջև (հմմտ. *Գէորգ' Գէ-որգ*, *Անասիա' Անասի-ա*, *Սիոն' Սի-ոն* և այլն). գ) ձայնավորի և այնպիսի (կիսաձայն-) ձայնորդի միասնությամբ կազմությունը, որի ձայնորդական բաղադրիչը տվյալ լեզվում կարող է ունենալ նաև վանկարար գործառույթ («V + S» / «S + V»). 2) **մեկ վանկում արտաբերվող երկու ձայնավորի կապակցություն, որի բաղադրիչները հավասարաբար են** (լատիշերենի, լիտվերենի և ուեյերենի օրինակով), **այսինքն՝ չկան վանկարար և ոչ վանկարար բաղադրիչներ**: Ըստ այդմ՝ չի կարող խոսք լինել երկբարբառի *միջուկի* և *գլխի* հնչյունի մասին:

Նշված բնութագրերի առնչությամբ կարևոր է հաշվի առնել հետևյալը. Ա) (1) կետի (ա) և (բ) ենթակետերի առնչությամբ պիտի նկատի ունե-

¹⁸ Տե՛ս Матусевич М., նշվ. աշխ., էջ 81:

նալ, որ հնչաբառի կազմում անմիջական հաջորդականություն կազմող ձայնավորները կարող են արտաբերվել իբրև ընդհանուրվանկային իրողություն՝ վանկային մեկ շեշտով, այն է՝ *ու-նէա՛ք, միա՛կ, միե՛ղէն, Բգնա-տիե՛, Գէո՛րգ, Ամա-սիա՛, Սիո՛ն*։ Բ) (2) կետի պատկերացման համաձայն երկրարբառ չեն (1) կետում նշված բոլոր տեսակները։

3. Երկրարբառի ըմբռնումն ըստ Հ. Գլիսոնի

Երկրարբառը բնորոշելու հիմնական դժվարությունները, ըստ էության, արտացոլվել են ամերիկյան դեսկրիպտիվ լեզվաբանության ներկայացուցիչ Հ. Գլիսոնի՝ երկրարբառի մասին հակիրճ բնութագրում. «Երկրարբառները կարելի է դիտարկել կամ որպես ձայնավորներ, որոնց որակը նկատելիորեն փոխվում է արտասանության ժամանակ, կամ էլ ձայնավորների կամ ձայնավորի և կիսաձայնի հաջորդականություններ։ Հնչյունաբանորեն առաջին մեկնաբանությունն ամբողջության մեջ ավելի ձիշտ է. հնչույթաբանության տեսանկյունից դրանք հաճախ ավելի հարմար է համարել հնչույթների հաջորդականություններ, իսկ որոշ դեպքերում՝ անբաժանելի հնչույթներ։ Հնչյունաբանական և հնչույթաբանական տեսանկյուններից երկրարբառ տերմինի իմաստը կարող է խիստ տարբեր լինել»¹⁹։ Այս և հետագա շարադրանքում երկրարբառի մասին Հ. Գլիսոնի պատկերացումները հանգում են հետևյալին. 1) երկրարբառը դիտարկելով ըստ հնչյունաբանական և հնչույթաբանական հայեցակերպերի՝ հնչյունաբանական առումով ձիշտ է համարվում երկրարբառի համարժեք լինելը մեկ ձայնավորի (հավանաբար նկատի ունի անգլերենի գրային *o*-ի երկրարբառային արտաբերությունը, ինչպես՝ *home* [houm] «տուն», *go* [gou] «գնալ», *no* [nou] «ոչ» և այլն), իսկ հնչույթաբանական առումով՝ որպես հնչույթների հաջորդականության, իհարկե՝ չի բացառվում նաև մեկ հնչույթի համարժեք լինելու տարբերակը. հնչույթաբանական տեսանկյունից հնարավոր է համարվում նաև երկհնչույթ երկրարբառների տարբերակումը. 2) չի կարևորվում երկրարբառի բաղադրիչների՝ մեկ վանկում արտաբերվելու պահանջը, որը սովորաբար համարվում է երկրարբառի բնութագրական գծերից մեկը, որովհետև, ինչպես ասվեց, երկրարբառը կարող է լինել նաև երկհնչույթ, իսկ այդ դեպքում բաղադրիչները, որպես կանոն, բաշխվում են կից վանկերի միջև. 3) ինչպես երկրարբառի՝ բլումֆիլդյան բնորոշման մեջ, չի կարևորվում կիսաձայնի՝

¹⁹ Глисон Г., Введение в дескриптивную лингвистику, М., 1959, с. 280.

տվյալ լեզվում վանկարար գործառույթ ունենալու (/չունենալու) հանգամանքը. 4) տարբերակվում է ինչպես հավասարաչափ շեշտով (իր բնորոշումով՝ *հավասար* (անգլ. *level*)), որ նույնն է, թե՛ հավասարաթեք բաղադրիչներով, այսինքն՝ առանց վանկարարի, այնպես էլ բաղադրիչներից մեկի ուժեղ շեշտվածությամբ, այսինքն՝ վանկարարով երկբարբառներ. երկրորդ տեսակի դեպքում առանձնացվում են *իջնող* և *բարձրացող* երկբարբառներ. իջնող են անգլերենի [ay], [aw], [ɔy] երկբարբառները, «որոնց նվազ շեշտված բաղադրիչը հնչույթաբանության տեսանկյունից մեկնաբանվում է որպես կիսաձայն». հնչունաբանական առումով բարձրացող է [yʌ]-ն, սակայն հնչույթաբանորեն ոչ բոլորն են այն համարում երկբարբառ²⁰:

4. Երկբարբառի ընդլայնված ըմբռնման փորձ Ա) Երկբարբառի ընդլայնված ըմբռնման հիմքերը

Կարծում ենք՝ երկբարբառի՝ որպես լեզվական միավորի բնութագիրը որոշակիացնելու համար էական նշանակություն ունի գիտական գրականության մեջ շրջանառվող այնպիսի երևույթների քննությունը, ինչպիսիք են. 1) (Դ) կետի ըմբռնմամբ *խկական* երկբարբառների տարբերակման լեզվական (/լեզվաբանական) հիմքերի, 2) այսպես կոչված՝ «բարդ հնչույթների», «երկբարբառային կապակցությունների» և երկբարբառների առնչությունների, 3) հնչույթի, երկբարբառի և *երկբարբառակերպի* (*diphthongoid* / *дифтонгоид*) տարբերակման լեզվական (/լեզվաբանական) հիմքերի հարցերը:

Ինչպես նշվեց, հավասարաթեք ձայնավորական բաղադրիչներով երկբարբառներ տարբերակվում են ուղեյերենում, լիտվերենում և լատիշերենում: Կարևոր է նկատել, որ Մ. Մատուսևիչի կողմից լիտվերենում *խկական* (= հավասարաթեք բաղադրիչներով) երկբարբառ համարված [iˈe]-ն (հմմտ. [iɛna] ‘քեղի, կողափայտ’ (‘оглобля’)) Մ. Պետերսոնը համարում է «բարդ ձայնավոր»: Վերջինիս կարծիքով, այդպիսին է նաև [uˈo]-ն: Նա լիտվերենում երկբարբառ է համարում *ai* [ai], *ei* [ei], *ui* [ui] հնչունական համակցությունները²¹: Երկբարբառներից բացի, Մ. Պետերսոնը տարբերակում է նաև *երկբարբառային կապակցություններ*, որոնք կարձ ձայնավորի և *r*, *l*, *m*, *n* ձայնորդ բաղաձայնների միացություններ են,

²⁰ Глисон Г., ևշվ. աշխ., с. 281:

²¹ Стѹ Петерсон М., Очерк литовского языка, М., 1955, էջ 16:

ինչպես՝ [ar] – *gar sas* «հնչյուն», [an] – *lan kas* «աղեղ», [il] – *pilnas* «լրիվ» և այլն²²:

Լիտվերենի այլ ուսումնասիրողներ ճանաչել են ութ երկբարբառի (հմմտ. *ai, au, ei, eu, ui, oi, ie, uo*) և տասնվեց, այսպես կոչված, «խառն երկբարբառի» (ըստ Մ. Պետերսոնի՝ «երկբարբառային կապակցության») գոյությունը (հմմտ. *al, el, il, ul, am, em, im, um, an, en, in, un, ar, er, ir, ur*): Երկրորդ՝ «V + S» (այլ կերպ՝ «խառն» որակված) տեսակից տարբերակելու համարառաջինները՝ «V₁ + V₂» տեսակին վերաբերողները, պայմանակա՝ նորեն կանվանենք *բուն երկբարբառներ*: Ըստ այդ հեղինակների՝ բուն երկբարբառներից առաջին վեցի բաղադրիչներն արտաբերվում են հստակ, իսկ վերջին երկուսի՝ [ie], [uo], բաղադրիչները միաձուլվում են, այդ պատճառով էլ «այդ երկբարբառ հնչույթների» արտասանությունը, նրանց կարծիքով, մոտենում է երկբարբառակերպի: Բայց, որ կարևոր է, այդ նույն «երկբարբառները [իմա՝ [ie], [uo]-ն – Վ.Պ.], ինչպես և ձայնավորները, տարբեր հնչերանգներով վանկերում համարվում են մեկ հնչույթի նրբերանգներ» (թավր՝ Վ.Պ.)²³:

Ինչպես տեսնում ենք, լիտվերենի [ie]-ի և [uo]-ի հնչարտաբերական բնութագիրը հստակ չէ. ի վերջո, ինչպիսի՞ միավորներ են դրանք՝ երկբարբառ, երկբարբառակերպ, թե՞ բարդ հնչույթ («բարդ ձայնավոր»?), նույնիսկ՝ հնչույթի նրբերանգ, այսինքն՝ դիրքային տարբերակ, այն է՝ այլահնչակ: Թվում է՝ նշված միավորների տարբերակման որոշակի չափորոշիչներ չկան և գնահատումը հանգում է անհատական, հետևաբար սուբյեկտիվ ընկալումներին: Ակնհայտ է, որ այդ տարբերակումներն ունեն առավելապես (եթե ոչ՝ բացառապես) հնչյունաբանական բնույթ, սակայն հայտնի չէ՝ դրանք փորձառական հետազոտությունների՞, թե՞ պարզ լսողությամբ կատարված դիտարկումների արդյունք են (այդ մասին ոչինչ չի ասվում): Անկախ այն բանից՝ այդ բնութագրերը հիմնվում են փորձառական հետազոտությունների տվյալների վրա, թե անգն ալկանջով կատարված քննության արդյունք են²⁴, բոլոր դեպքերում էլ հնչյունաբանա-

²² Տե՛ս Սեդրսոն Մ., նույն տեղում:

²³ Амбразас В., Вайткавичюте В., Валяцкене А., Моркунас К., Сабалаяускас А., Ульвидас К., Литовский язык // ЯН СССР, т. I, Индоевропейские языки, М., 1966, էջ 504:

²⁴ Լեզվաբանական աշխարհագրության ձևավորման պատմությունից հայտնի է, որ երաժշտական սուր լսողությամբ էր օժտված ֆրանսիացի «հնչյունաբան» Էդմոնը, որը Ֆրանսիայի լեզվաբանական աշխարհագրության քարտեզները կազմելու աշխատանքների ժամանակ անգն ալկանջով տարբերակում էր բարբառների հնչյունական նուրբ առանձնահատկությունները (տե՛ս **Ջահուկյան Գ.**, Լեզվաբանության պատմություն, հատ. 1, Եր., 2015 (2-րդ հրատ.), էջ 569): Ըստ ռոմանական լեզուների գիտակ Յորգու Յորդանի՝ լեզվական սուր զգացողությամբ օժտված էր հենց ֆրանսիական լեզվա-

կան հետազոտության տվյալները, իհարկե կարևոր են, բայց բավարար չեն հիմնախնդրի հանգուցալուծման համար: Անհրաժեշտ է նաև հնչույթաբանական մոտեցում, որը, սակայն, տվյալ դեպքում դյուրին խնդիր չէ: Նախքան այդպիսի քննությունը, անհրաժեշտ ենք համարում ևս մի քանի հարցերի պարզաբանումը: Ըստ այդմ.

1. Նախ՝ Լ. Շչերբան, ապա Մ. Մատուսևիչը²⁵ խոսում են ռուսերենում երկբարբառակերպի՝ որպես հնչարտաբերական հատկանիշներով երկբարբառից տարբեր հնչյունական միավորի առկայության մասին: Ըստ Լ. Շչերբայի՝ որոշակի դիրքերում («... բառամիջում՝ փափուկ և կոշտ բաղաձայնների միջև՝ *сел, мел*, իսկ որոշներում՝ նաև բառասկզբում՝ *этом, эва, эхо...*») ռուսերենի ձայնավորն ունի «շատ յուրօրինակ արտաբերություն»՝ «այն սկսվում է լայն *u*-ով և ավարտվում է շատ լայն *э*-ով»: այդպիսի *э*-ն նա բնորոշում է որպես երկբարբառակերպ և տառադարձությամբ նշանակում է «¹ε₁»-ով²⁶: Մ. Մատուսևիչի կարծիքով ևս ձայնավորը, որն «իրենից առաջ (կամ հետո) ունի ուրիշ՝ սովորաբար արտաբերությամբ իրեն մերձավոր ձայնավորի ոչ էական բաղադրիչ, որի առկայությունը ձայնավորի հնչմանը հաղորդում է որոշ չափով ոչ համասեռ բնույթ՝ չթողնելով, սակայն, երկբարբառի տպավորություն», ճիշտ կլինի բնորոշել իբրև երկբարբառակերպ²⁷: Նա այդպիսին է համարում, օրինակ, [¹ɔ], [¹e], [¹e¹] տիպի հնչյունները. դրանցից [¹e¹]-ն հնչում է, օրինակ, *дед* «պապ», *лемо* «ամառ», *сетка* «ցանց», [¹e¹]-ն *цель* «թիրախ» բառերում²⁸: Վ. Կոդուխովը, որը ևս ընդունում է նշված տիպի երկբարբառակերպերի գոյությունը ռուսերենում, *о*-ի երկբարբառակերպային արտաբերություն է

բանական ատյասի ստեղծման աշխատանքները ղեկավարող Ժյուլ Ժյոյերոնը (տե՛ս **Йоргу Йордан**, Романское языкознание, М., 1971, էջ 234-235): Բարբառագետ Վ. Պետոյանի վկայությամբ բարբառային յուրահատկությունների սուր զգացողությամբ էր օժտված Կոմիտաս վարդապետը, որը մեկ հնչյունի արտաբերումից կարող էր անսխալ որոշել անձի բարբառային պատկանելիությունը (տե՛ս **Պետոյան Վ.**, Հուշ Կոմիտասի մասին // Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2009, էջ 302-303):

²⁵ Տե՛ս **Матусевич М.**, նշվ. աշխ., էջ 81 (ծնթգր. 1),- **Зиндер Л.**, նշվ. աշխ., էջ 211:

²⁶ **Щерба Л.**, Фонетика французского языка, М., 1955, էջ 36:

²⁷ **Матусевич М.**, նշվ. աշխ., էջ 81-82: Հմմտ. նաև. «Լեզվաբանորեն պարզ անտրոհելի հնչյուն, որը սկսվում կամ ավարտվում է շատ կարճ (և առանձնացվելու համար անկարող) այլ որակի ձայնավոր մերձհնչյունով» (**Щерба Л.**, նշվ. աշխ., էջ 36, ծնթգր. *): Մ. Մատուսևիչը Լ. Շչերբայի տեսակետին ծանոթ է եղել դեռևս նրա դասախոսություններից (տե՛ս **Матусевич М.**, նշվ. աշխ., էջ 81, ծնթգր. 1):

²⁸ Տե՛ս **Матусевич М.**, նշվ. աշխ., էջ 82: Հմմտ. նաև՝ **Маслов Ю.**, Введение в языкознание, М., 1975, էջ 83:

դիտարկում *дом* «տուն» բառում՝ [dʲoːo m]²⁹, ուր երկբարբառակերպի հնչյունական արժեքն է [ʲoːo] (ըստ Մ. Մատուսևիչի՝ [ʲo]):

2. Կարծում ենք՝ ակնհայտ է, որ մի կողմից՝ լիտվերենի [ie] և [uo] ձայնավորական համակցությունները, որոնք Մ. Պետերսոնը բնորոշել է որպես «բարդ ձայնավորներ», իսկ լիտվացի լեզվաբանների խումբը համարել է **ոչ հատակ արտաբերությամբ երկբարբառ, որը այլ հնչեքանգով վանկերի դեպքում կարող է համարժեք լինել նաև հնչույթի նրբերանգի**, մյուս կողմից՝ ռուսերենի [e], [eʲ], [ʲo] ձայնավոր հնչյունները, որոնք Մ. Մատուսևիչը համարել է երկբարբառակերպեր, – ըստ էության, հնչաբանական (*phonematic / фонематический*) միևնույն երևույթի դրսևորումներն են՝ նշանակված տառադարձական ոչ էական տարբերությամբ. եթե լիտվերենի (ըստ այդմ՝ նաև մյուս լեզուների՝ լատիշերենի, ուղեյերենի) դեպքում երկու ձայնավորներին վերագրվում է հավասարաթեք հնչեղություն, իսկ ռուսերենի նշված «երկբարբառակերպերի» դեպքում ձայնավորական բաղադրիչներից մեկը համարվում է հիմնական, իսկ մյուսը ուղեկցող, ըստ այդմ՝ նրանց չի վերագրվում հավասարաթեք հնչեղություն, – կարծում ենք՝ ընդամենը անհատական, հետևաբար սուբյեկտիվ ընկալման արդյունք է: Ըստ էության, այդ մասին է վկայում լիտվացի հեղինակների միտքն այն մասին, որ նշված երկձայնավոր համակցությունները «տարբեր հնչերանգներով վանկերում» կարող են համարժեք լինել «մեկ հնչույթի նրբերանգների»: Այս հանգամանքը, սակայն, Մ. Մատուսևիչին չի խանգարել, որ լիտվերենի վերոհիշյալ ձայնավորական համակցությունները համարի *խկական* (= հավասարաթեք) երկբարբառներ, իսկ ռուսերենի դեպքում՝ երկբարբառակերպեր:

3. Ռուսերենում երկբարբառներ չեն տարբերակվում, և տիպաբանորեն հավանական չէ, որ երկբարբառ չունեցող լեզվում լինեն երկբարբառակերպեր: Որպեսզի ժամանակակից ռուսերենում լինի երկբարբառակերպ, առնվազն հին ռուսերենի փուլում պիտի լինեին երկբարբառներ, որոնք, գտնվելով մենաբարբառացման (= ձայնավորի վերածվելու) ընթացքի մեջ, դիտարկվող շրջանում դեռևս ունենային անցումային (= երկբարբառակերպային) դրություն: Սակայն հին ռուսերենում ևս երկբարբառներ չեն տարբերակվում³⁰, իսկ հին սլավոներենում, որը ժամանակա-

²⁹ Տե՛ս Кодухов В., Введение в языкознание, М., 1979, էջ 124:

³⁰ Տե՛ս Борковский В., Кузнецов П., Историческая грамматика русского языка, М., 1965, էջ 47-51, 138-141, – Иванов В., Историческая фонология русского языка, М., 1968, էջ 55-122, – Սոլկի՝ Историческая грамматика русского языка, М., 1990, էջ 100-111:

գրորեն հին ռուսերենի անմիջական նախորդն է, այդպիսի միավորների գոյության մասին սլավոնագիտության մեջ կարծիքները միանշանակ չեն³¹:

Կարծում ենք՝ ասվածի օրինակները տալիս է ֆրանսերենը՝ հին շրջանից մինչև մեր օրերն ընկած շուրջ հազարամյա ժամանակահատվածում: Այսպես, ժամանակակից ֆրանսերենն ունի ձայնավորների երկգիր և եռագիր կապակցություններ, որոնք համարժեք են մեկ ձայնավոր հնչյունի (հմմտ. *nous* [nu] «մենք. մեզ», *rouge* [ru:g] «կարմիր», *le jour* [lə-ʒu:r] «օր», *chaud* [ʃo] «տաք», *l'heure* [lœ:r] «ժամ», *lafleur* [flœ:r] «ծաղիկ», *lasœur* [sœ:r] «քույր» և այլն, *beaucoup* [bô-ku] «շատ, բազմաթիվ», *le gateau* [lə-ga-ˈto] «թխվածք», *la peau* [la-ˈpo] «մաշկ» (кожа), *l'eau* [lo] «ջուր» և այլն): Ձայնավորական այդ կապակցությունները հին ֆրանսերենի (IX–XIII դդ.) և միջին ֆրանսերենի (XIV–XV դդ.) փուլերում եղել են երկբարբառներ և եռաբարբառներ, որոնք արդի ֆրանսերենում, իսկ մի մասն էլ արդեն միջին ֆրանսերենից սկսած հնչյունափոխվել են՝ վերածվելով մենաբարբառ ձայնավորների³²: Նոր ֆրանսերենի վաղ շրջանից (XVI դ.) սկսած երկբարբառների և եռաբարբառների տարբերակման հարցն այլևս միանշանակ չէ ֆրանսերենագիտության մեջ. ոմանք ձայնավորական բոլոր երկգիր հաջորդականությունները համարում են հնչյունների պարզ կապակցություններ³³, իսկ ուրիշները դրանց մի մասին, այնուամենայնիվ, վերագրում են երկբարբառային արժեք, գերազանցապես՝ *բարձրացող* երկբարբառների արժեք (հմմտ. *piéd* [pjɛ] «ոտք», *bien* [bjɛ] «լավ», *droit* [dʁwa] «իրավունք», *noir* [nwa:r] «սև», *trois* [trwa] «երեք», *voilà* [vwa-ˈla] «ահա» և այլն)³⁴:

Իհարկե, չպիտի բացառել նաև հակառակ ուղղվածության գործընթացը՝ պարզ ձայնավորի վերածումը երկբարբառի, որը կարող է անցնել «երկար ձայնավոր > (երկբարբառակերպ ?)» միջանկյալ աստիճան(ներ)ով: Այդպիսի երևույթ նկատվել է, օրինակ, գերմաներենում (հմմտ. մ.

³¹ Ինչպես արդեն նշել ենք՝ հին սլավոներենի հետազոտողներից միայն Ա. Վայանն է ընդունում այդ լեզվում երկբարբառների գոյությունը՝ որպես համակարգային իրողություն (Вайан А., Руководство по старославянскому языку, М., 1952, էջ 40): Ֆ. Ֆորտունատովը և Օ. Շիրոկովը երկբարբառային արտաբերություն են վերագրել միայն ѣ (/ѣ) տառով նշանակված հնչյունին (տե՛ս Фортунатов Ф., Избранные труды, т. 2, 1957, էջ 13, -Широков О., Языковедение: введение в науку о языке, М., 2003, էջ 218), որը, օրինակ, Ա. Սելիշչևը համարել է երկար ձայնավոր (տե՛ս Селищев А., Старославянский язык, ч. 1, М., 1951, էջ 125):

³² Տե՛ս Катагашина Н., Гурычева М., Аллендорф К., История французского языка, М., 1976, էջ 49-52, 165:

³³ Տե՛ս Катагашина Н., Гурычева М., Аллендорф К., նշվ. աշխ., էջ 203-207, 260-266:

³⁴ Տե՛ս Бондарко Л., Дифтонг // Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 138, -Աճառյան Ջ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ VI, Եր., 1971, էջ 145:

վ. գերմ. $\bar{i} > i^{\wedge} > ii > ei > e^{-}i > \ddot{ai} > ai$ և այլն)³⁵: Հնարավոր է, որ երկբարբառազման այդպիսի ճանապարհ են անցել նաև ժամանակակից անգլերենի այն երկբարբառները, որոնք գրությամբ արտահայտվում են մեկ տառով (հմմտ. *o* [ou]. *go* [gou] «գնալ», *home* [houm] «տուն», *i/y* [ai]. *line* [lain] «գիծ», *five* [faiv] «հինգ», *fly* [flai] «թռչել» և այլն):

Ժամանակակից ռուս հնչյունաբանական (/հնչույթաբանական) միտքը, սակայն, այդպիսի գործընթացի վկայություններ նույնպես չի տալիս:

4. Հարցին պատասխանելուց առաջ, նախ, պիտի պարզել, թե ինչպիսի բաղադրիչները կարող են համարվել երկբարբառներ և ինչպիսիք երկբարբառակերպներ:

Նկատի առնելով երկբարբառի ըմբռնման առումով զգալիորեն տարբեր պատկերացումները՝ կարծում ենք՝ հիմնախնդրի լուծում կարող է լինել նրա այնպիսի սահմանումը, որը կներառի գոնե հիմնական բնութագրերը, որովհետև երկբարբառի նեղ ըմբռնումներից յուրաքանչյուրից (մեր կարծիքով՝ այդպիսին են բոլոր վերը նշվածները՝ առանձին վերցրած) դուրս է (/են) մնում կարևոր հատկանիշ (/հատկանիշներ), և այդ դեպքում գրեթե անհնարին է հիմնավորել, թե ինչ առավելություն ունեն մյուսները, որոնց նախապատվություն է տրվել տվյալ ձևակերպման մեջ: Օրինակ, երբ երկբարբառը սահմանվում է որպես **միևնույն վանկում արտաբերվող և մեկ հնչույթի համարժեք երկու վանկաբար հնչյունների ամբողջություն**, ենթադրվում է, որ տվյալ միավորը, համարժեք լինելով մեկ հնչույթի (= գործառական մեկ նվազագույն միավորի), ըստ այդմ՝ պիտի ձևավորի գործառական նվազագույն հակադրություն(ներ): Բայց արդյո՞ք միշտ է այդպես: Այսպես. եթե *ծիւն* – *ձեան*, *սիւն* – *սեան*, *ալիւր* (հին՝ *ալեւր*)– *ալեւր*³⁶, *գիւղ* – *գեղջ*³⁷, *քոյր* – *քեռ*³⁸, *աւր* – *աւուր*, *ինքն* – *ին*–

³⁵ СЕ'у Жирмунский В., Общее и германское языкознание, М., 1976, էջ 286:

³⁶ Ալեւր (եզ. թ., անվն. հլ.) // ալեւր (եզ. թ., սեռ.-տր. հլ.) հերթագայության դեպքում կարող է խոսք լինել և ~օ(գրո) հակադրության մասին:

³⁷ Թեպետև եզ. թ., սեռ.-տր. հլ.-ում և նրանից կազմված եզ. բցռ.-ում ի գեղջ, բառաձևն ունի նաև հավելյալ -ջ (-յ) մասնիկ՝ գեղջ (geřj) (ավելի հին գեւղ ձևից. ըստ այդմ՝ կլինի եւ // ե, ըստ Եռլայան՝ ~օ հերթագայություն), բայց ակնհայտորեն այդ վերջինը ոչ մի առնչություն չունի հոլովական իմաստի կազմավորմանը: Ուսումնասիրողներն ընդհանուր առմամբ նույնական են համարում գեղջ, կնոջ (կին-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), տուընջեան (տիւ-ի «օր, ցերեկ» եզ. թ., սեռ.-տր. հլ.) բառաձևերի ջ-ն, բայց նրա ծագման մասին շատ թե քիչ հիմնավոր բացատրություն չի տրվում: Միանշանակ է մի բան. նրանցից ոչ ոք այդ ջ-ն չի համարում ածական (root determinative / детерминатив) (տե՛ս Աճառյան Յ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, Եր., 1957, էջ 58-68, 440-441,- Զահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սխառեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 194-195,- նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 118,- Туманян Э., Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, էջ 100-129,- Սուքիասյան Յ., Աճականը հայերենում, Եր., 1986,

քեսն հարաբերակցություններում կարող ենք ասել, որ քերականական իմաստների տարբերակումը (եզ. թ., անվ. հլ. ~ եզ. թ., սեռ.-տր. հլ.) պայմանավորված է, համապատասխանաբար, *իւ // ես, իւ (/եւ) // ե, իւ // ե, ոյ // ե, զ// ու, զ// ես* հերթագայություններով, հետևաբար այդ հերթագայությունները, որոնց առնվազն մեկ բաղադրիչը երկբարբառային կազմություն է (= երկբարբառ կամ երկբարբառակերպ), ունեն իմաստատարբերակիչ (= հնչույթաբանական) արժեք: Ըստ այդմ՝ կարող ենք ասել, որ նշված բառային զույգերում *իւ, ես, ոյ, ու* երկբարբառային կազմությունները համարժեք են մեկ հնչույթի: Սակայն այդ կազմությունների մասին նույնը չենք կարող ասել հետևյալ դեպքերում. 1) **քեսր** «տասը հազար» ~ **քե՛ր** (**քերեւ**-ի բուն հրամ. եղ., եզ. թ., 2-րդ դ.), **թիւ** «հաշիվ. թվանշան» ~ **թի** «թի», **նսւ** «նավ» ~ **նս** (անձն. դեր., եզ. թ., 3-րդ դ.), **հիւր** «այցելու» ~ **հիր** «հակնթագույն», **սիւն** «սյուն» ~ **սին** «դատարկ» (ւ ~ ծ), **կսւ** «տիղմ. սպիտակ կամ բրտի կավ» ~ **կամ** (համադաս. շաղկապ) (ւ ~ մ), **բոյր** «բուրմունք» ~ **բոր** «բորոտություն» (ւ ~ ր), **բու** «բու թռչունը» ~ **բով** «հնոց, քուրա» (ւ ~ վ), **խոյթ** (/խույթ / խիթ) «կոկորդիլոս»³⁹ ~ **խոթ** «խեթ, ծուռ», **խոյր** «բարձրաստիճան անձերի (թագավոր, իշխան, հոգևորական) գլխանոց (թագ, փաթեթոց)»⁴⁰ ~ **խոր** «խորունկ. գաղտնի», **հսյս** «ջրով շաղախված և դեռ չխմորված ալյուրի զանգված»⁴¹ ~ **հսս** «Ժամանելը. հասույթ. տուրք», **հայր** «հայր» ~ **հար(-ք)** (**հայր** բառի հզն. թ., անվն. հլ.) (յ ~ ծ), **հայր** «հայր» ~ **հար** (**հայր** բառի եզ. թ., սեռ.-տր. հլ.) (յ ~ լ), **նսյ** «թաց» ~ **նսի** «առաջ, նախքան» (յ ~ ի), **նու** «հարս» ~ **նոր** «նոր. չհնացած. արդի» (ւ ~ ր) և այլն, որոնցում առկա է ոչ թե «երկբարբառ ~ երկբարբառ» իմաստատարբերակիչ հակադրություն, այլ միայն «երկբարբառային կազմության ձայնորդական բաղադրիչ ~ այլ հնչույթ/հնչույթի բացակայություն» հակադրություն. 2) **սպեսն** «դատարան» – **սպենի** (**սպեսն**-ի եզ. թ.,

Էջ 94-96): Վերջին հանգամանքը, մեր կարծիքով, միանշանակ չէ, բայց քանի որ հիմնահարցի քննությունը վերաբերում է տարածամասնակյա հայեցակերպին, այստեղ մենք դրանով չենք զբաղվի:

³⁸ Զոր (եզ. թ., անվն. հլ.) – քեռ (եզ. թ., սեռ.-տր. հլ.) հարաբերակցության մեջ ր-ն և ռ-ն միևնույն ձևահնչույթի (morphoneme / морфонема)՝ <Դ//Ո>, դիրքային տարբերակներն են (իմստ. նաև՝ բարձ – բառնալ «բարձրացնել», դարձ – դառնալ «վերադառնալ», ձեռն – ձերբ (ձերբակալ «ձեռքերը կապված» բառի կազմում) և այլն), ըստ այդմ՝ համարժեք են մեկ բարդ հնչույթի (տե՛ս **Պետրոսյան Վ.**, Ձևահնչույթի և ձևահնչույթաբանության լեզվաբանական կարգավիճակը, ԲԵՂ, 2009, N3, Էջ 96-105, - նույնի՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր. 2015, Էջ 118-130):

³⁹ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, 2010, Էջ 340, - **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, Էջ 568:

⁴⁰ Օրինակն ըստ **Ղազարեան Ռ.**, Նշվ. աշխ., Էջ 578:

⁴¹ Օրինակն ըստ **Ղազարեան Ռ.**, Նշվ. աշխ., Էջ 703:

սեռ.-տր. հլ.) – *ալփենադպիր* «դպրապետ», *մալփեան* – *մալփենագիր* «մատյան գրող», *սենեակ*⁴² «սենյակ. գանձատուն. կանանոց» (եզ. թ., անվ. հլ.) – *սենեկի* (եզ. թ., սեռ.-տր. հլ.) – *սենեկատր* «ճգնավոր»⁴³, *վայրկեան* (եզ. թ., անվ. հլ.) – *վայրկենի* (եզ. թ., սեռ.-տր. հլ.), *լեանոն* (*լեռ*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) – *լեռանք* (*լեռ*-ի եզ. թ., գործ. հլ.), *քեռ* «տասը հազար» (եզ. թ., անվ. հլ.) – *քիրու* (*քեռ*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.), *մալր* (*մայր*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) – *մալր* (*մայր*-ի եզ. թ., գործ. հլ.), *քոյր* (եզ. թ., անվ. հլ.) – *քերք* (եզ. թ., գործ. հլ.), *ինքեան* «իր» (*ինքն*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) – *յինքենէ* «իրենից» (*ինքն*-ի եզ. թ., բցռ. հլ.), *լոյս* – *լուսատր* «լուսատու», *կոյս* «միանձնուի» – *կուսի* (*կոյս*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) և այլն, որոնցում նույնօրինակ (հմմտ. *ես* // *ե*, *եւ* // *իւ*, *աւ* // *ա*, *ոյ* // *ե*, *ոյ* // *ու*) հերթագայություններն իմաստատարբերակիչ գործառնությո չունեն. դրանք միայն կազմավորում են արմատի (/հիմքի) տարբերակը, որից ձևավորվում է նոր բառածևը՝ թեքման միջոցով կամ նոր բառը՝ բառակազմական մասնիկի՝ ածանցի հավելումով: Բերված օրինակներում բուն իմաստատարբերակիչ (= քերականական կամ բառային իմաստի տարբերակման) գործառնությով օժտված են վերջնամասնիկները՝ վերջավորությունները և վերջածանցները: Ի տարբերություն հերթագայությունների նախորդ՝ իմաստատարբերակիչ գործառնոթ ունեցողների, երկրորդ տեսակի հերթագայությունները բնությով ձևահնչոթաբանական են, ըստ այդմ՝ ներկայացնում են <ԵԱ / Ե>, <ԵԻ / ԻԻ>, <ԱԻ / Ա>, <ՈՅ / Ե>, <ՈՅ / ՈԻ> ձևահնչոթները, իսկ ձևահնչոթաբանական հերթագայություններն ունեն ձևակազմիչ, ավելի ստոյգ՝ ձևակակազմիչ (*morpho-formative* / *морфообразовательный*), բայց ոչ իմաստատարբերակիչ բնոթ, որքան էլ որ ձևահնչոթի կազմում հերթագայվողները հնչոթներ են⁴⁴:

5. Ըստ իս՝ վերոշարադրյալը հիմք է տալիս որպես երկբարբառի բնոթագրական հատկանիշներ՝ նկատի ունենալ առնվազն հետևյալները. 1) երկու վանկարար հնչյունի միասնական արտաբերությունն իբրև հնչարտաբերական մեկ ամբողջություն, այսինքն՝ և՛ «V₁ + V₂», և՛ «V + S» (/«S + V») կաղապարները, եթե ձայնորդական բաղադրիչը տվյալ լեզվում

⁴² Ավանդվել է նաև սենեկ տարբերակով (տե՛ս Աճառյան Յ., Զայերեն արմատական բառարան, հատ. IV, Եր., 1979, էջ 201, - **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 675):

⁴³ Այս բառի համար տե՛ս Նոր բառգիրք Զայկազեան լեզուի, հատ. II, Եր., 1981, էջ 706, - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Աթիլիաս, 1988, էջ 719:

⁴⁴ Ձևահնչոթի մասին պատկերացումները զգալիորեն տարբեր են, ընդհուպ՝ այդպիսի լեզվական միավորի ժխտումը: Մենք առաջնորդվում ենք ձևահնչոթի և ձևահնչոթաբանության վերաբերյալ մեր հողվածում շարադրված պատկերացումով (տե՛ս **Պետրոսյան Վ.**, Ձևահնչոթի և ձևահնչոթաբանության // Նույն տեղում, - Նույնի՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր):

իրականացնում է նաև ձայնավորական (= վանկարար) գործառույթ. 2) և՛ հավասարարժեք (= առանց վանկարարի), և՛ ոչ հավասարարժեք (= վանկարարով) տեսակները. 3) և՛ միահնչույթ, և՛ երկհնչույթ տարբերակները, եթե երկհնչույթի բաղադրիչները հնչաշղթայում ընկալվում են որպես հնչարտաբերական մեկ ամբողջություն (հմնտ. *Գէորգ, Սիոն*): Վերջինին վերաբերում են նաև ձևության կարով տրոհվողները: Այդպիսիք նույնպես՝ իբրև առանձին ենթատեսակ, մենք ձիշտ ենք համարում դասել երկբարբառների կարգում, որովհետև լիարժեք երկբարբառ համարվելու համար դրանց միակ խոցելի կողմը միևնույն վանկին չվերաբերելը կամ ձևաբանական տարբեր բաղադրիչների՝ ձևային վերաբերելն է, սակայն այդ «բացը» լրացվում է հնչարտաբերական ամբողջություն լինելու նրանց ներունակությամբ, որը համարվում է միևնույն վանկում արտաբերվողների յուրահատկությունը: Հատկապես որ հաճախ (ինչպես նշված օրինակներում) վիճելի է՝ հնչաշղթայի կից ձայնավորները վերաբերում են միևնույն վանկին, թե՞ տարբեր վանկերի, որովհետև միանշանակ չէ, օրինակ, *Գէորգ*-ը և *Սիոն*-ը արտաբերվել են որպես միավանկ բառեր, թե՞ երկվանկ: Կարծում ենք՝ ասվածի անուղղակի հիմնավորում կարող է լինել նաև այն իրողությունը, որ միևնույն ձևային բաղադրիչները վանկատման դեպքում ոչ հազվադեպ հայտնվում են վանկային տարբեր կառուցվածքներում (հմնտ. **հեռու**. *հեռ-ալ* «վեճ ունենալ» (*հեռ*, -ի «վեճ, կռիվ»)՝ կազմված է *հեռ-* և *-ալ* ձևայիններից, բայց տրոհվում է *հեռ-ալ* վանկերի. նույն կերպ. **լոյս** (> **լուս**), բայց՝ **լու-սա-նալ** (-այր) «լոյսը բացվել», **արու** «որձ». **արու**, բայց՝ **ար-ուս-կան** «արուին հատուկ», **արին**. **ա-րին**, բայց՝ **ա-րի-նա-թոր** «արյուն ծորող», **գոյ.գոյ**, բայց՝ **գո-յա-կից** «համագոյ», **գոյն**. **գոյն**, բայց՝ **գու-նել** «ներկել», **զգոյշ**. (ը)զ-գոյշ «ուշադիր, զգոն», բայց՝ (ը)զ-գու-շա-բար «զգուշությամբ», **յարկ** «տանիք». **յարկ**, բայց՝ **յար-կա-նել** «տանիքով ծածկել», **վտար**⁴⁵. **վարար**-, բայց՝ **վ(ը)-արարել** (/–եցի) «հեռացնել, վանել» և այլն): Այսինքն՝ ավելի հաճախադեպ են ձևային կարի և վանկաբաժանի չհամընկնելու, քան համընկնելու դեպքերը⁴⁶: Հետևաբար ինչպես ձևային կարով տրոհելիու–

⁴⁵ Առանձին չգործածվող արմատ է, բայց բավականին կենսունակ է բառակազմության մեջ (տե՛ս **Ղազարեան Ռ.**, Նշվ. աշխ., էջ 1205):

⁴⁶ Այս միտքը ճիշտ է առնվազն գրաբարյան հայերենի համար. առանց դժվարության վերջը Նշված՝ անհամընկնելիության օրինակների թիվը կարելի է անգամներով բազմապատկել, բայց հակառակի, այսինքն՝ համընկնող օրինակների որոնումները արդյունավետ չեն: Իհարկե, այն կարծիքին չենք, թե այդպիսի օրինակների ցանկը մենք սպառել ենք: Ստույգ պատկեր ստանալու համար անհրաժեշտ կլինի իրականացնել վիճակագրական հատուկ քննություն, բայց առանց այդպիսի քննության էլ ակնհայտ է, որ առկա է առաջին տիպի օրինակների բացարձակ գերակշռություն:

թյան, այնպես էլ միևնույն վանկին վերաբերելիության չափանիշները ևս անխախտ չեն:

Բ) Երկբարբառի ընդլայնված սահմանումը

Հաշվի առնելով վերոհիշյալ քննությունը՝ կարելի է առաջարկել երկբարբառի հետևյալ սահմանումը. **երկբարբառը երկու ձայնավորի կամ ձայնավորի և վանկարար ձայնորդի արտասանությունն է իբրև հնչարտաբերական մեկ ամբողջություն, որը հնչույթաբանորեն կարող է համարժեք լինել ինչպես միևնույն վանկում արտաբերվող մեկ բարդ հնչույթի, այնպես էլ ձևույթային կարով տրոհվող և (/կամ) կից վանկերի միջև բաշխվող երկու հնչույթի:** Ըստ այդմ՝ երկբարբառը կարող է ունենալ « $V_1 + V_2$ », « $V + S$ » և « $S + V$ » կադապարային կառուցվածքները, բայց չի կարող ունենալ « $S_1 + S_2$ » կադապարային կառուցվածքը, եթե նույնիսկ երկու ձայնորդներն էլ տվյալ լեզվում օժտված են վանկարար գործառնությամբ, որովհետև այդպիսի երկբարբառներ պարզապես վկայված չեն: Օրինակ հայերենում եթե նույնիսկ հնչաշղթայում երկու ձայնորդ հայտնվում են կողք-կողքի, նրանք կամ վերաբերում են տարբեր վանկերի, կամ նրանց միջև արտաբերվում է գաղտնավանկի *ը* (օ)–ն (հմտ. *ըմբռնել* «բռնել. հասկանալ»՝ *ըմբռնել*, *լռել* «լուռ մնալ, չխոսել»՝ *լըռել*, *մղել* «վանել, հեռացնել»՝ *մըղել*, *մնալ* «միևնույն տեղում շարունակել լինել»՝ *մընալ*, *մռնչել* «մռնչումն հանել»՝ *մըռնչել* և այլն):

Այս սահմանումը՝ 1) չպնդելով երկբարբառի հնչունական բաղադրիչների անպայմանորեն մեկ վանկում արտաբերվելու պահանջը՝ այնուամենայնիվ այդ գաղափարը ներառում է որպես նրա հիմնական բնութագրիչներից մեկը, 2) երկբարբառ է ճանաչում ինչպես վանկարարով երկհնչուն կազմությունները («վանկի միջուկ + գլայդ»), այնպես էլ երկու հավասարաթեք (= առանց վանկարարի) հնչեղությամբ ձայնավորական կազմությունները, 3) երկբարբառ է համարում ինչպես մեկ հնչույթի (= գործառնական մեկ նվազագույն միավորի) համարժեք երկ-ձայնավոր (ներառյալ՝ «ձայնավոր + վանկարար ձայնորդ») կապակցությունները, այնպես էլ այն երկհնչույթ հաջորդականությունները, որոնք կարող են տրոհվել ձևույթային կարով, բայց արտասանվում են որպես հնչարտաբերական մեկ ամբողջ:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե երկբարբառի այսպիսի բնութագիրը բարդացնում է նրա տարբերակման հնարավորությունը:

Իհարկե, դժվար կլինի այդպիսի կարծիքը հիմնագուրկ համարել: Չենք բացառում, որ կարելի է բավարարվել նաև երկբարբառի բնորոշումով՝ որպես **երկու վանկարար հնչյունի միասնական արտաբերությունը մեկ վանկում**, սակայն՝ 1) չենք կարող պնդել, որ բոլոր դեպքերում այն համարժեք է մեկ հնչյոթի, 2) նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, հազիվ թե այդպիսի սահմանումն ընդհանուրլեզվաբանական առումով կարող է ամբողջական համարվել, այն է՝ ներառել հնարավոր բոլոր դեպքերը:

Երկբարբառի առաջարկվող բնութագիրը ևս մեկ ձգգրտման կարիք ունի: Ձայնավորական կազմությամբ երկբարբառները նույնական չեն բոլոր չափորոշիչներով. նրանց մի մասը վերաբերում է միևնույն վանկին (հմմտ.գրք. հյ. [եա] (ea)-ն. *այրեան՝ ա-յրեան, մայրեան՝ մա-յրեան, սեան* և այլն, անգլ. [ou] – *home* [houm] «տուն», *goad* [goud] «շարժառիթ», [εə] – *there* [ծεə] «այնտեղ» և այլն, ֆրնս. [ua] – *le froid* [le-’frua] «ցուրտ», *voir* [vua:r] «տեսնել», [vɛ] – *la nuit* [la-’nɥi] «գիշեր», [vɛ] – *le manuel* [lə-ma-’nɥel] «դասագիրք» և այլն, գերմ. [ae] – *ein* [aen] «առանց», [ao] – *auch* [aox] «նույնպես, նաև», [ɔø] – *Häuser* [hɔø:sər] «թաղամաս» և այլն, լատ. [au] – *aurum* «ոսկի», *aurus* «ականջ», [eu] – *Europa* – *Եվրոպա*, [oe] – *foedus* «միություն», հուն. [ε ι] – *χ ε ι ρ* «ձեռք», [o ι] – *ο ι ν ο ς* «գինի» և այլն), իսկ մի մասն էլ՝ երկհնչյոթ տեսակը, հնչարտաբերական միասնություն ունի հնչաշղթայում, բայց նրա բաղադրիչները կարող են վերաբերել կից վանկերի և (/կամ) տրոհվել ձևային կարով: Երկրորդ տեսակին վերաբերող երկբարբառների օրինակներ շատ ունի գրաբարյան հայերենը (հմմտ. [էի] (ēi) – *շարժէիր* «շարժ(վ)ում էիր» (անց. անկ.ժ., եզ. թ., 2-րդ դ.)՝ *շար-ժէ-իր, ունէիր* «ուներում էիր» (անց. անկ.ժ., հզն.թ., 2-րդ դ.)՝ *ու-նէ-իր*, [էո] (ēo) – *Գէորգ* (անձնանուն)՝ *Գէ-որգ, Թաղէոս* (անձնանուն)՝ *Թա-ղէ-ոս*, [իա] (ia) – *միակ՝ մի-ակ, Ամասիա* (տեղանուն)՝ *Ա-մա-սի-ա*, [իե] (ie) – *միեղէն* «միակ, եզակի»՝ *մի-ե-ղէն, իէ* (iē) – *Իզնա-յրիէ՝* (անձնանուն. իբրև կոչական գործածվելիս)⁴⁷, *Իզ-նա-յրի-է՝*, [իո] (io) – *Անրիոք* (տեղանուն)՝ *Ան-յրի-ոք, Տիբերիոս* (անձնանուն)՝ *Տի-բե-րի-ոս* և այլն): Առաջին տեսակի՝ մեկ վանկի վերաբերողները, բուն երկբարբառներն են. դրանք մենք կբնորոշենք որպես *կայուն երկբարբառներ* (*stable diphthong* / *устойчивый дифтонг*): Երկրորդները, որոնք կարող են

⁴⁷ Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 1976, էջ 26:

տրոհվել երկու վանկերի միջև, կանվանենք *ոչ կայուն երկբարբառներ* (*unstable diftong / неустойчивый дифтонг*)⁴⁸:

Երկբարբառի՝ մեր առաջարկած պատկերացումից դուրս են մնում «ձայնավոր + ոչ վանկարար ձայնորդ» («V + S», «S + V») հնչյունակապակցությունները: Կարծում ենք՝ ձիշտ կլինի տարբերակել այդպիսի կապակցությունների երկու ենթատեսակ՝ «ձայնավոր + i / y) / u (w) կիսաձայն ձայնորդ» և «ձայնավոր + l / (ɹ) / r / (ɹ) / n / m ոչ վանկարար ձայնորդ»: Առաջին ենթատեսակին են վերաբերում, օրինակ, գրաբարյան հայերենի *այ* (ai), *ոյ* (oi), *աւ* (au), *եւ* (eu), *իւ* (iu), *ւո* (uo), արդի ֆրանսերենի [aj] – *travail* [tra-ˈvaj] «աշխատանք», [je] – *marie* [ma-ˈrje] «ամուսնացած», *pièce* [pjɛs] «սենյակ», *fier* [fjɛ:r] «հպարտ», [ɛj] – *soleil* [so-ˈlɛj] «արև», [ij] – *famille* [fa-ˈmij] «ընտանիք», [œj] – *feuille* [fœj] «տերև», [jø] – *yeux* [jø] «աչք» տիպի կապակցությունները⁴⁹, իսկ երկրորդ ենթատեսակին՝ լիտվերենի «խառն երկբարբառ» համարվածները: Երկու ենթատեսակներն էլ երկբարբառ չհամարելու բուն պատճառը իրենց կազմում ոչ վանկարար բաղադրիչ ունենալու հանգամանքն է, բայց դրանք ունեն ևս մեկ առանձնահատկություն, որն էլ հիմք է տալիս ենթատեսակների տարբերակման համար: Այն է. թեև ինչպես կիսաձայն (*j* (i/y), *ɹ* (u/w)), այնպես էլ կողային (*l* (l), *ɹ* (ɹ)), թրթռուն (*n* (ɳ), *n* (r)) և ռնգային (*u* (n), *u* (m)) ձայնորդներին վանկարարությունը բնորոշ չէ ինքնին՝ որպես ձայնաբանական հատկանիշ, այլ միայն որոշակի դիրքերում, երբ գործառնում են իբրև ձայնավոր, բայցևայնպես կիսաձայններն ինքնին երկբնույթ են. նրանք ձայնաբանական հատկանիշներով ամենից մոտն են ձայնավորներին, ձայնավորների և բաղաձայնների միջև ունեն, այսպես կոչված, միջին վիճակ, հետևաբար՝ վանկարար լինելու ամենամեծ ներունակությունը ձայնավորներից հետո: Ուստի կիսաձայնների և ձայնավորների կապակցությունն էլ միջին վիճակ է ներկայացնում ձայնավորների և երկբարբառների համեմատությամբ: Ինչ վերաբերում է «ձայնավոր + l

⁴⁸ Իսկական (истинный) և անիսկական (скользящий) տերմինները, մեր կարծիքով, հաջող չեն, որովհետև «անիսկական», ըստ էության, կանխավորված է կեղծ (ложный), հետևաբար՝ ոչ երկբարբառ: Անիսկական երկբարբառ կարող է համարվել, թերևս, երկբարբառակերպը, բայց այդ դեպքում էլ չկա նրա հակադիր եզրը ներկայացնող միավորը՝ այսպես կոչված «իսկական» երկբարբառակերպը:

⁴⁹ Ինչպես վերը տեսանք, պրոֆ. Է. Աղայանն իր «Լեզվաբանության հիմունքներում» (ևսև «Լեզվաբանության ներածության» ավելի վաղ հրատարակություններում) երկբարբառը սահմանում է որպես «երկու վանկարար հնչյունների միացությունը մեկ վանկում » (Աղայան Է., նշվ. աշխ., էջ 226), բայց «Գրաբարի քերականության» մեջ ավանդույթի ուժով շարունակում է երկբարբառ համարել «V+S», «S+V» տիպի կաղապարներով կազմությունները, երբ ինքն էլ երբեք չի ասում, թե գրաբարյան հայերենում ձայնորդներն ունեցել են նաև վանկարար գործառնություն:

(/ṣ) / r(/ṣ) / n / m ձայնորդ» տիպի կապակցություններին, ապա դրանք ձայնավորի և բաղաձայնի պարզ հաջորդականություններ են. նրանց բաղադրիչներին բնորոշ չէ հնչարտաբերական սերտ միասնությունը նույնիսկ մեկ վանկում արտաբերվելու դեպքում: Որպես կանոն, երբ այդ ձայնորդները չունեն վանկարար գործառնություն, սովորական բաղաձայններ են: Կարծում ենք՝ պատահական չէ, որ նույնիսկ այն լեզուներում, որոնցում կողային, թրթռուն և ռնգային ձայնորդներն ունեն նաև վանկարար տարբերակներ, ոչ հազվադեպ դրանցով երկրաբառներ չեն կազմավորվում: Վիճակն այդպիսին է, օրինակ, հին հնդկերենում. այս լեզվում տարբերակվում են r_* , r_* , l_* , l_* վանկարար ձայնորդները, բայց հին հնդկերենում դրանց և ձայնավորի միացությամբ երկրաբառներ չկան⁵⁰:

Կարծում ենք՝ «ձայնավոր + i_* (y) / u_* (w) կիսաձայն» կապակցությունների և «ձայնավոր + l (/ṣ) / r (/ṣ) / n / m ձայնորդ» հաջորդականությունների որակական տարբերության մասին է վկայում նաև այն իրողությունը, որ առաջինները երկրաբառների նման կարող են հնչյունափոխվել պարզ ձայնավորների, ընդ որում՝ ինչպես գրական լեզվում (հմմտ. *գհւղ* > *գեղջ*, *դուռն* > *դ(ը)րունք* «դռներ», *քոյր* > *քեռ*, *այր* «տղամարդ» > *արք* «տղամարդիկ», *մայր* > *մարք* «մորով» և այլն), այնպես էլ բարբառներում (հմմտ. *աւ* (aṽ). *արաւր* «արոր» > *արուր* (Սվեդ.), *աւր* «օր» > *ուրր* (Քես.), *արաւր* «արոտավայր» > *արօդ* (Հմշ.), *ոյ* (oi). *լոյս* «լույս» > *լիս* (Երև., Բելլան), *քոյր* «քույր» > *քուր* (Թբիլիսի)⁵¹, *լոյս* > *լուս* (Հմշ.), *ձկոյթ* «ձկույթ» > *ձկոթ* (Վան), *քոյն* «քույն» > *ք'ըն*, *ք'ան* (Ջեյթ.), *իւ* (iṽ). *հարիւր* «հարյուր» > *հարիր* (Երև.), *հարիւր* > *խայիր* (Ուրմիա), *ալիւր* «ալյուր» > *ալուր* (Հմշ.), *սին* «սյուն» > *սին* (Հմշ.), *այ* (ai). *այծ* «այծ» > *էծ*, *հայր* «հայր» > *խէր*, *ձայն* «ձայն» > *ծէն* (Վան). *ու* (ou). *յուռն* > *յոսն* (Ղրբղ., Ղարադաղ, Սվեդ., Ջեյթ.), *ուրախ* >

⁵⁰ Յին հնդկերենի երկրաբառներն էին՝ ai, au, e, o (տե՛ս Елизаренкова Т., Грамматика ..., էջ 65-67, - Նույնի՝ Санскрит // Языки мира: индоарийские языки древнего и среднего периодов, М., 2004, էջ 31-32, - Зализняк А., նշվ. աշխ., էջ 788): E-ն և o-ն երկրաբառ են համարվել ավանդաբար, իսկ երկար $\bar{i}$ ձայնորդը, թեպետև հին հնդկերենի քերականություններում տարբերակվում է, գործնականում տեքստերում չի հանդիպում (նույն տեղում): Թ. Բարոուն սանսկրիտում տարբերակում է նաև ռնգային վանկարարներ՝ ր, ք (տե՛ս Барроу Т., նշվ. աշխ., էջ 103):

⁵¹ Բարբառային ձևերում, որպես կանոն, ու տառով նշանակվում է պարզ ու [u] ձայնավորը, ինչպես արդի գրական հայերենում:

օրախ (Հադրութ) և այլն)⁵², իսկ երկրորդներին այդպիսի հնչյունափոխությունը բնորոշ չէ:

Կարծում ենք՝ վերոշարադրյալը բավարար հիմք է տալիս «ձայնավոր + j (i/y) / l (u/w) կիսաձայն ձայնորդ» կապակցությունները համարելու երկբարբառակերպեր, իսկ ձայնավորի և l (l), η ($\pm$), n ($\dot{x}$), p (r), $\acute{u}$ (n), $\acute{u}$ (m) ձայնորդների զուգորդումները՝ ձայնավորի և բաղաձայնի հաջորդականություններ:

5. Կրկին լիտվերենի և լատիշերենի «հավասարաթեք երկբարբառների» և ռուսերենի այսպես կոչված «երկբարբառակերպների» մասին

Վերադառնալով Լ. Շչերբայի և Մ. Մատուսևիչի տարբերակած հավասարաթեք երկբարբառների և ռուսերենի այսպես կոչված «երկբարբառակերպների» խնդրին՝ պիտի նշել հետևյալը: Համաձայն երկբարբառակերպի՝ մեր առաջարկած բանաձևի՝ այդ բաղադրիչներից ոչ մեկը չի կարող երկբարբառակերպ համարվել: Ըստ այդմ՝ դրանք կամ հավասարաթեք երկբարբառներ էին, կամ պարզապես հնչույթի՝ ձայնաբանական որոշակի երանգավորումով դիրքային տարբերակներ, այլ կերպ՝ այլահնչակներ: Այս երևույթի հնչույթաբանական հանգուցալուծումը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ որոշակի դժվարություններով, իսկ հնչյունաբանականը, եթե նույնիսկ հենվում է փորձառական հետազոտությունների տվյալների վրա, միշտ ունի սուբյեկտիվության զգալի բաժին: Այդուհանդերձ, ռուսերենի վերոհիշյալ միավորները՝ [e], [e'], [ʷ], նկատի ունենալով նաև լեզվում երկբարբառի և երկբարբառակերպի առկայության փոխադարձ պայմանավորվածության մասին ասվածը, ըստ ամենայնի՝ հնչույթի դիրքային տարբերակներ էին, մանավանդ հեղինակներն իրենք էլ են նշում, որ դրանց բաղադրիչներից մեկը հիմնական է, իսկ մյուսն ունի միայն ուղեկցող դեր: Լիտվերենի և լատիշերենի վերոհիշյալ միավորների հնչույթաբանական բնութագրի հարցում կողմնորոշվելն ավելի բարդ է, որովհետև ուսումնասիրողների գնահատականները խիստ տարբեր են: Բայցևայնպես, դրանք հավասարաթեք երկբարբառներ կամ բարդ ձայնավորներ համարելու հիմքում, մեր կարծիքով, ընկած են նրանց բաղադրիչ-

⁵² Բարբառային օրինակների համար տե՛ս **Աճառյան Զ.**, Զննություն Զամշենի բարբառի, Եր., 1947,- նույնի՝ Զննություն Վանի բարբառի, Եր., 1953,- նույնի՝ Զննություն Կիլիկիայի բարբառի, Եր., 2003,- **Ղարիբյան Ա.**, Զայ բարբառագիտություն, Եր., 1953:

ների հնչարտաբերական շատ մոտ, երբեմն էլ՝ նույնական հատկությունները: Այն է. 1) *e* և *i* ձայնավորներն ընդհանուր առմամբ *առաջնային շարքի*, իսկ *a*, *o*, *u* ձայնավորները՝ *հեղին շարքի* հնչյուններ են. 2) լեզվի բարձրացման առումով *e*-ն միջին, իսկ *i*-ն վերին բարձրացման ձայնավոր է, *a*-ն ունի գրեթե բոլոր հնարավոր տարբերակները՝ *սրորին*, *միջին* և *վերին*: Այդ թվում՝ կան նաև *a*-ի շրթնայնացած տարատեսակներ (հմտ. ä° , $\text{a}^{\circ\circ}$, $\text{a}^\circ [\text{ə}]$), իսկ շրթնայնությունը հատկապես *o*-ի և *u*-ի բնութագրական հատկանիշն է, ընդ որում՝ ոչ միայն հնչյունաբանական, այլև հնչույթաբանական⁵³: Այս բնութագրերը կարող էին նաև հավասարաժեքության տպավորություն թողնել նույնիսկ փորձառական (= գործիքային) հետազոտության դեպքում:

Եզրակացություններ

Վերոհիշյալ քնությունը հիմք է տալիս եզրակացնելու հետևյալը.

1) Երկբարբառի նեղ բնորոշումներից և ոչ մեկը չի ներառում լեզվական այդ միավորի բոլոր բնութագրական գծերը, հետևաբար դրանցից և ոչ մեկը չի կարող բավարարել որպես երկբարբառի սահմանում: Միանշանակ չեն, մասնավորապես, երկբարբառի հնչյունական բաղադրիչների՝ մեկ վանկում արտաբերվելու և գործառական մեկ նվազագույն միավորի՝ հնչույթի համարժեք լինելու պահանջները.

2) Երկբարբառային բնութագրի համար հիմնական պիտի համարել *երկու վանկարար հնչյունի միասնական արտասանությունը՝ որպես հնչարտաբերական մեկ ամբողջություն, որը կարող է համարժեք լինել ինչպես մեկ հնչույթի, այնպես էլ երկու հնչույթի*: Ընդհանուր առմամբ երկբարբառը համարժեք է մեկ հնչույթի, երբ նրա բաղադրիչները վերաբերում են միևնույն վանկին և համարժեք է երկու հնչույթի, երբ նրա բաղադրիչները տրոհվում են ձևային կարող կամ կարող են վերաբերել կից վանկերի: *Մեկ վանկ – մեկ հնչույթ* համապատասխանությունը, սակայն, բացարձակ չէ, որովհետև բացառված չէ, որ երկհնչույթ կարող է լինել նաև մեկ վանկում արտաբերվող երկբարբառը.

3) Ի տարբերություն միևնույն վանկին վերաբերողների, որոնց բաղադրիչները, որպես կանոն, կայունություն են դրսևորում, մյուս տեսա-

⁵³ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 205-210, - Реформатский А., Введение в языковедение, М., 1967, էջ 181-187, - Матусевич М., նշվ. աշխ., էջ 72-79, - Глисон Г., նշվ. աշխ., էջ 72-75, - Зиндер Л., նշվ. աշխ., էջ 196-209:

կին վերաբերողների բաղադրիչներին կայունությունը բնորոշ չէ, ուստի կայունության չափանիշով երկրարբառները կրաժանվեն *կայուն* և *ոչ կայուն* տեսակների.

4) Տեսականորեն ընդունելի է երկրարբառների երկու հիմնական՝ *մեկ վանկարարով* և *հավասարարժեք* (= առանց վանկարարի) տեսակների տարբերակումը, սակայն գործնականում երկրորդ տեսակի ընդունումը, ինչպես ցույց են տալիս, օրինակ, լիտվերենում այդպիսիք համարվածներին տրված տարբեր գնահատականները, խնդրահարույց է, որովհետև նրա տարբերակման հիմքում առավելապես հնչյունաբանական չափանիշներ են, այլ ոչ թե հնչույթաբանական, իսկ հնչյունաբանական չափանիշը, իբրև կանոն, հատկանշվում է զգալի սուրյեկտիվությամբ:

Վարդան Զ. Պետրոսյան (ԵՊՀ) – գիտական հետաքրքրությունների շրջանակում են ընդհանուր լեզվաբանության, համեմատական հնդեվրոպաբանության, հայոց լեզվի համեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և հայ հնչույթաբանության հարցերը: Հեղինակ է երկու գրքի և շուրջ յոթ տասնյակ հոդվածի, որոնք հրապարակվել են ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտական հանդեսներում:

Էլ. huught` vz.petrosyan@ysu.am

Summary

ON SOME ISSUES OF DIPHTHONG FORMATION

Vardan Z. Petrosyan

Candidate of Sciences in Philology

Keywords - a genuine diphthong, a false diphthong, an equivalent diphthong, stable and non-stable diphthongs, a nucleus of a diphthong, a glide sound, a diphthongoid, E. Aghayan, H. Gleason, L. Zinder.

Linguistics has suggested considerably different approaches with regard to diphthongs all of which can be summed up as follows: 1) A diphthong is the pronunciation of two vowels in one syllable (V_1+V_2) (N. Trubetzkoy, G. Trager, K. Pike, H. Gleason, A. Reformatsky, etc.) The following is yet another version of this definition - a diphthong is the pronunciation of syllabic sounds within a single

syllable with only one component being syllabic (E. Aghayan). 2) A diphthong is the pronunciation of two vowels or a vowel and a semi-vowel (y, i) in one syllable. In this case, it is not important whether the sonorant has the syllabic function of or not. (D. Jones, H. Acharyan, G. Ghapantsyan, etc.). 3) A diphthong is the combination of only a vowel and a (semi-vowel) sonorant (V+S / S+V) in one syllable (L. Bloomfield). Some distinguish between true and false diphthongs considering the combination of two vowels with equivalent components to belong to the first group, i.e., with no syllabic sound (L. Shcherba, J. Vahek, R. Budagov, etc.), unlike the three other types in which one of the diphthong components is syllabic (a nucleus of a diphthong). While these approaches regard a diphthong a minimum functional unit – a phoneme, another approach views a two-phoneme (= two-vowel) formation acting as one phonetic whole a diphthong. The components of a two-phoneme diphthong can be divided by a morphemic seam or can relate to adjacent syllables.

The key descriptions of diphthongs provide grounds for a broader understanding of the unit. Hence, a diphthong is the pronunciation of two vowels or a vowel and a syllabic sonorant as a phonetic whole, which phonemically can be equivalent to a complex phoneme uttered in the same syllable or to two phonemes divided by a morphemic seam and (or) two phonemes distributed between adjacent syllables. Based on this interpretation, diphthongs can be stable and non-stable: the former include two-vowel combinations uttered in the same syllable. The latter contain two-phoneme formations uttered in adjacent syllables and/or divided by a morphemic seam. According to the fullness of the sound, there are non-equivalent (with a syllabic component) and equivalent (without a syllabic component) diphthongs.

Following the given interpretation of the formation of diphthongs, the combination of a vowel and a non-syllabic (semi-vowel) sonorant in a single syllable is a diphthongoid rather than a diphthong.

ВОПРОСЫ ТЕОРИИ ДИФТОНГИЧЕСКИХ СОЕДИНЕНИЙ

Вардан З. Петросян

Канд. филол. наук

Ключевые слова - истонный дифтонг, ложный дифтонг, равнозначный дифтонг, устойчивый и неустойчивый дифтонги, ядро дифтонга, глайд-звук, дифтонгоид, Э. Агаян, Г. Глисон, Л. Зиндер.

В языкознании существуют значительно отличающиеся друг от друга представления о дифтонгах, которые можно подытожить в следующих пунктах: 1) **дифтонг – это совместная артикуляция двух гласных в одном слоге** (V_1+V_2) (Н. Трубецкой, Дж. Трейджер, К. Пайк, Г. Глисон, А. Реформатский и другие). В сущности, другим вариантом определения является: «дифтонг как произнесение двух слогообразующих звуков в одном слоге, в котором лишь один из составляющих слогообразующий» (Э. Агаян); 2) **дифтонг – это произнесение двух гласных или гласной и полугласного-сонорного (ц, ъ) в одном слоге**: в данном случае не считается существенным наличие/отсутствие слогообразующего фактора сонорного звука в данном языке (Д. Джоунс, Г. Ачарян, Г. Капанцян и другие); 3) **дифтонг – это только сочетание гласной и полугласной-сонорной ($V+S/S+V$) в том же самом слоге** (Л. Блумфильд). Некоторые различают *истинные* и *ложные* дифтонги, относя к первым такое сочетание гласных, в котором компоненты равнозначны, т.е. нет слогообразующего звука (Л. Щерба, Й. Вахек, Р. Будагов и другие), в отличие от вышеупомянутых трех видов, в которых один из компонентов слогообразующий (*ядро* дифтонга). Если согласно вышеназванным определениям дифтонга он равноценен одной минимальной функциональной единице – фонеме, то согласно иному определению, **дифтонгом является также двуфонемное (= двугласное) соединение, представляющее одно фоноартикулируемое целое**. Компоненты двуфонемных дифтонгов могут отделяться морфемным швом или относиться к соседним слогам.

Изучение основных характеристик дифтонгов дает основание выдвигать расширенное определение этой единицы, согласно которой **дифтонг – это произнесение двух гласных или гласной и слогообразующей сонорной как одно фоноартикулируемое целое, которое фонологически может быть**

равноценно как одной сложной фонеме, произнесенной в том же слоге, так и двум фонемам, разделенным морфемным швом и/или распределяющимся на стыке смежных слогов. Согласно этому представлению, дифтонги делятся на *устойчивые* и *неустойчивые* виды; к первым относятся двуфонемные соединения, произносимые в том же слоге, а ко вторым – произносимые в смежных слогах и/или разделенные *морфемным* швом двуфонемные соединения. Согласно критерию полногласия, различают *неравнозначные* (= со слогообразующим элементом) и *равнозначные* (= без слогообразующего элемента) дифтонги.

Согласно данному пониманию дифтонгических соединений, произносимое в одном слоге сочетание гласного и неслогообразующего полугласного-сонорного – это *дифтонгоид*, а не дифтонг.

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
2. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987
3. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, Եր., 1957:
4. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, Եր., 1971:
5. Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, Եր., 2003:
6. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Եր., 1947:
7. Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Եր., 1953:
8. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988
9. Համբարձումյան Վ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2018:
10. Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004:
11. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Եր., 1953:
12. Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն, Եր., 1939:
13. Նոր բառգիրք Հայկազնեան լեզուի, հատ. II, Եր., 1981:
14. Պետոյան Վ., Հուշ Կոմիտասի մասին, «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Եր., 2009, էջ 301-310:
15. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
16. Պետրոսյան Վ., Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015:
17. Պետրոսյան Վ., Ձևահնչույթի և ձևահնչույթաբանության լեզվաբանական կարգավիճակը, ԲԵՀ, 2009, N 3, էջ 96-105:
18. Զահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հատ. I, Եր., 2015 (2-րդ հրատ.):
19. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010:
20. Զահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959:

21. **Սոթրիաշան Հ.**, Ածականը հայերենում, Եր., 1986:
22. **Амбразас В., Вайткявичюте В., Валяцкене А., Моркунас К., Сабалаяускас А., Ульвидас К.**, Литовский язык // ЯН СССР, т. I, *Индоевропейские языки*, М., 1966.
23. **Ахманова О.**, Словарь лингвистических терминов, М., 1966.
24. **Барроу Т.**, Санскрит, М., 1976.
25. **Бернштейн С.**, Очерк сравнительной грамматики славянских языков, М., 1961.
26. **Блумфилд Л.**, Язык, М., 1968.
27. **Бондарко Л.**, Дифтонг // *Лингвистический энциклопедический словарь*, М., 1990.
28. **Борковский В., Кузнецов П.**, Историческая грамматика русского языка, М., 1965.
29. **Будагов Р.**, Введение в науку о языке, М., 1958.
30. **Вайан А.**, Руководство по старославянскому языку, М., 1952.
31. **Вилюман В., Корнеева Е., Сорокина И.**, Английский язык, М., 1980.
32. **Глисон Г.**, Введение в дескриптивную лингвистику, М., 1959
33. **Горшков А.**, Старославянский язык, М., 1974.
34. **Грабис Р.**, Латышский язык // ЯН СССР, т. I, *Индоевропейские языки*, М., 1966
35. **Джаукян Г.**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982.
36. **Елизаренкова Т.**, Грамматика ведийского языка, М., 1982.
37. **Елизаренкова Т.**, Древнеиндийские языки // *Языки мира*, М., 2004.
38. **Зализняк А.**, Грамматический очерк санскрита // **Кочергина В.**, Санскритско-русский словарь, М., 1978.
39. **Зиндер Л.**, Общая фонетика, М., 1979.
40. **Жирмунский В.**, Общее и германское языкознание, М., 1976.
41. **Иванов В.**, Историческая грамматика русского языка, М., 1990.
42. **Иванов В.**, Историческая фонология русского языка, М., 1968.
43. **ЙорданЙ.**, Романское языкознание, М., 1971.
44. **Катагашина Н., Гурычева М., Аллендорф К.**, История французского языка, М., 1976
45. **Кодухов В.**, Введение в языкознание, М., 1979.
46. **Маслов Ю.**, Введение в языкознание, М., 1975.
47. **Матусевич М.**, Введение в общую фонетику, Л., 1948.
48. **Матюшкина-Герке Т., Балашова С., Броссе Н., Иванова Л., Кузьмичева Т., Чахойн Л.**, Учебник английского языка, М., 1968.
49. **Мейе А.**, Общеславянский язык, М., 1951.
50. **Петерсон М.**, Очерк литовского языка, М., 1955.
51. **Реформатский А.**, Введение в языковедение, М., 1967.
52. **Суник О.**, Удэгейский язык // ЯН СССР, т. V, *Монгольские, тунгусо-маньчжурские и палеоазиатские языки*, Л., 1968.
53. **Трубецкой Н.**, Основы фонологии, М., 2000.
54. **Туманян Э.**, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978.
55. **Фортунатов Ф.**, Избранные труды, т. II, М., 1957.
56. **Хабургаев Г.**, Старославянский язык, М., 1974.
57. **Хэмп Э.**, Словарь американской лингвистической терминологии, М., 1964.
58. **Щерба Л.**, Фонетика французского языка, М., 1955.
59. **Широков О.**, Языковедение: введение в науку о языке, М., 2003.

REFERENCES

1. **Abrahamyan A.**, Grabari jeŋnark, Yer., 1976 (**In Armenian**).
2. **Acharyan H.**, Liakatar qerakanut'yun hayots' lezvi, hat. III, Yer., 1957 (**In Armenian**).
3. **Acharyan H.**, Liakatar qerakanut'yun hayots' lezvi, hat. VI, Yer., 1971 (**In Armenian**).
4. **Acharyan H.**, Qnnut'yun Kilikiayi barbari, Yer., 2003 (**In Armenian**).
5. **Acharyan H.**, Qnnut'yun Hamsheni barbari, Yer., 1947 (**In Armenian**).
6. **Acharyan H.**, Qnnut'yun Vani barbari, Yer., 1953 (**In Armenian**).
7. **Aghayan Ė.**, Lezvabanut'yan himunqner, Yer., 1987 (**In Armenian**).
8. **Akhmanova O.**, Slovar' lingvisticheskikh terminov, M., 1966 (**In Russian**).
9. **Ambrasas V., Vaytkyavichute V., Valyats'kene A., Morkunas K., Sabalyauskas A., Ul'vidas K.**, Litovskiy yazyk // YaN SSSR, t. I, *Indoevropeyskie yazyki*, M., 1966, ss. 500-527 (**In Russian**).
10. Arjeŋn baŋaran haykaznean lezui, Ant'illas, 1988 (**In Armenian**).
11. **Barrou T.**, Sanskrit, M., 1976 (**In Russian**).
12. **Beŋnshteyn S.**, Ocherk sravnitel'noy grammatiki slavyanskikh yazykov, M., 1961 (**In Russian**).
13. **Blumfeld L.**, Yazyk, M., 1968 (**In Russian**).
14. **Bondarko L.**, Diftong // Lingvisticheskij ėnts'iklopedicheskij slovar', M., 1990, s. 138 (**In Russian**).
15. **Borkovskiy V., Kuznets'ov P.**, Istoricheskaya grammatika russkogo yazyka, M., 1965 (**In Russian**).
16. **Budagov Ė.**, Vvedenie v nauku o yazyke, M., 1958 (**In Russian**).
17. **Džaukyan G.**, Lezvabanut'yan patmut'yun, hat. I, Yer., 2015 (2-rd hrat.) (**In Armenian**).
18. **Džaukyan G.**, Hayeren stugabanakan baraŋan, Yer., 2010 (**In Armenian**).
19. **Džaukyan G.**, Hin hayereni holovman sistemĕ ev nra tsagumĕ, Yer., 1959 (**In Armenian**).
20. **Džaukyan G.**, Sravnitel'naya grammatika armyanskogo yazyka, Yer., 1982 (**In Russian**).
21. **Elizarenkova T.**, Grammatika vediyskogo yazyka, M., 1982 (**In Russian**).
22. **Elizarenkova T.**, Drevneindijskie yazyki // Yazyki mira, M., 2004 (**In Russian**).
23. **Fortunatov F.**, Izbranniye trudy, t. II, M., 1957 (**In Russian**).
24. **Ghap'ants'yan G.**, Ėndhanur lezvabanut'yun, Yer., 1939 (**In Armenian**).
25. **Gharibyan A.**, Hay barbaŋagitut'yun, Yer., 1953 (**In Armenian**).
26. **Ghazaryan Ė.**, Grabari baŋaran, Ant'illas, 2004 (**In Armenian**).
27. **Glison G.**, Vvedenie v deskriptivnyu lingvistiku, M., 1959 (**In Russian**).
28. **Gorshkov A.**, Staroslavjanskij yazyk, M., 1974 (**In Russian**).
29. **Grabis A.**, Latyšskij yazyk // YaN SSSR, t. I, *Indoevropeyskie yazyki*, M., 1966, ss. 466-499 (**In Russian**).
30. **Hambarjumyan V.**, Grabari jeŋnark, Yer., 2018 (**In Armenian**).
31. **Ivanov V.**, Istoricheskaya grammatika russkogo yazyka, M., 1990 (**In Russian**).
32. **Ivanov V.**, Istoricheskaya fonologiya russkogo yazyka, M., 1968 (**In Russian**).
33. **Katagashchina N., Gurycheva M., Allendorf K.**, Istoriya frants'uskogo yazyka, M., 1976 (**In Russian**).
34. **Khaburgaev G.**, Staroslavjanskij yazyk, M., 1974 (**In Russian**).
35. **Khemp Ė.**, Slovar' amerikanskoy lingvisticheskoy terminologii, M., 1964 (**In Russian**).
36. **Kodukhov V.**, Vvedenie v yazykoznanie, M., 1979 (**In Russian**).
37. **Maslov Yu.**, Vvedenie v yazykoznanie, M., 1975 (**In Russian**).
38. **Matusevich M.**, Vvedenie v obshchuyu fonetiku, L., 1948 (**In Russian**).

39. **Matyushkina-Gerke T., Balashova S., Brosse N., Ivanova L., Kuz'micheva T., Chakhoyan L.**, Uchebnik angliyskogo yazyka, M., 1968 **(In Russian)**.
40. **Meille A.**, Obshchесlavяnskiy yazyk, M., 1951 **(In Russian)**.
41. Nor baġirġ haykazyan lezvi, hat. II, Yer., 1981 **(In Armenian)**.
42. **Peterson M.**, Oчерk litovskogo yazyka, M., 1955 **(In Russian)**.
43. **Petoyan V.**, Hush Komitasi masin // *Komitasē zhamanakakits'neri husherum ev vkayut'yunnerum*, Yer., 2009, ēj 301-310 **(In Armenian)**.
44. **Petrosyan H.**, Hayagitakan baġaran, Yer., 1987 **(In Armenian)**.
45. **Petrosyan V.**, Ėndhanur ev hay lezvabanut'yan harts'er, 2015 **(In Armenian)**.
46. **Petrosyan V.**, Jevahnchuyt'i ev jevahnchuyt'abanut'yan lezvabanakan kargavičakē // BYH, 2009, hat. III, ēj 96-105 **(In Armenian)**.
47. **Reformatskiy A.**, Vvedenie v yazykovedenie, M., 1967 **(In Russian)**.
48. **Shcherba L.**, Fonetika frants'uskogo yazyka, M., 1955 **(In Russian)**.
49. **Shirokov O.**, Yazykovedenie: vvedenie v nauku o yazyke, M., 2003 **(In Russian)**.
50. **Sunik O.**, Udegeyskiy yazyk // YaN SSSR, t. V, Mongol'skie, tunguso-man'chžurskie i paleoaziatskie yazyki, L., 1968, c. 212 **(In Russian)**.
51. **Suqiasyan H.**, Ačakanē hayerenum, Yer., 1986 **(In Armenian)**.
52. **Trubets'koy N.**, Osnovy fonologii, M., 2000 **(In Russian)**.
53. **Tumanyan Ė.**, Struktura indoevropeyskikh imyen v armyanskom yazyke, M., 1978 **(In Russian)**.
54. **Vayan A.**, Ėukovodstvo po staroslavяnskomu yazyku, M., 1952 **(In Russian)**.
55. **Vil'uman V., Korneeva E., Sorokina I.**, Angliyskiy yazyk, M., 1980 **(In Russian)**.
56. **Yordan Y.**, Romanskoe yazykoznanie, M., 1971 **(In Russian)**.
57. **Zaliznyak A.**, Grammaticheskiy oчерk sanskrita // **Kochergina V.**, Sanskritsko-russkiy slovar', M., 1978, ss. 785-895 **(In Russian)**.
58. **Zinder L.**, Obshchaya fonetika, M., 1979 **(In Russian)**.
59. **Zhirmunskiy V.**, Obshchee i germanskoe yazykoznanie, M., 1976 **(In Russian)**.